

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հարցազրույցը «Առավոտ» օրաթերթին 2014 թվականի հունվարի 15-ին

-Պարոն Հակոբյան արդեն 6 ամիս է ղեկավարում եք Սյունիքի մարզպետի պաշտոնը: Ինչպիսի՞ Սյունիք եք «ժառանգել» 6 ամիս առաջ:

- Ընդհանուր առմամբ, պետք է ասել, որ վերջին տարիներին մարզում էական ծրագրեր են իրականացվել՝ ինչպես կրթության ոլորտում, այնպես էլ՝ առողջապահության: Բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ եւս էական աշխատանքներ են իրականացվել պետության կողմից: Մենք քաջատեղյակ ենք տարիներ շարունակ բարձրացվող հիմնախնդիրներին ու մեր քայլերը միտված են դրանք աստիճանաբար լուծելուն: Բայց, դեռեւս, հեռու ենք այն մտքից, որ գտել ենք բոլոր լուծումներն ու միջոցները:

- Որո՞նք են մարզի գերակա խնդիրները, որ առաջիկայում կլինեն Ձեր ուշադրության կենտրոնում:

- Առաջիկա տարիներին մեր ուշադրությունը սևեռված է լինելու զբաղվածության հիմնախնդրի մեղմմանը: Փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանն ուղղված քայլերն են մեր օրակարգում: Այսօր միջազգային եւ տեղական տարբեր կազմակերպությունների հետ ուսումնասիրություն ենք իրականացնում, ցանկանում ենք բացահայտել մեր մարզի ներուժը: Ճշտում ենք այն ուղղությունները, որտեղ հնարավոր կլինի յուրաքանչյուր սյունեցու համար ստեղծել բարենպաստ միջավայր՝ ձեռնարկատիրությամբ զբաղվելու և եկամուտ ստանալու համար:

-Բայց մարզում կա՞ն նման հնարավորություններ:

-Իհարկե, մարզում կան բավականին լավ հնարավորություններ. ե՛ւ աշխարհագրական դիրքը, եւ տարբեր գոտիների նպաստավոր բնակլիմայական պայմանները թույլ են տալիս հատկապես գյուղատնտեսության ոլորտում արդյունավետ ծրագրեր իրականացնել: Արդեն քարտեզագրել ենք եւ հստակ պատկերացումներ ունենք, թե որ տարածաշրջանում գյուղատնտեսության, որ ճյուղի զարգացումը կարող ենք խթանել: Զուգահեռաբար զբաղվում ենք նաև իրացման շուկաներ գտնելով, առանց դրա դժվար է արդյունքներ ակնկալել:

-Այսինքն՝ մարզում առկա զբաղվածության ներկայիս մտահոգիչ իրավիճակը մտադիր եք բիզնես միջավայրի ստեղծմամբ մեղմել:

- Այո, ամեն ինչ պետք է անենք բիզնես միջավայրը նպաստավոր դարձնելու համար: Մարդիկ իրենց մտավոր ու նյութական կարողությունները ներդնելով պետք է կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները: -Օրինակ ի՞նչ բիզնես կարող են անել Սյունիքում: -Ցանկացած: Սկսած քարերի վերամշակումից, թեթև արդյունաբերությունից, մեխանիկայից մինչև թռչնաբուծություն, անասնապահություն, պտղաբուծություն: Գործում ոսկերչության զարգացման հեռանկարներ կան, Մեղրիում պտուղների վերամշակման: Կարելի է երկար թվարկել:

-Պարո՛ն Հակոբյան, տարեվերջին Սյունիքում ներդրումային համաժողով էր կազմակերպվել եւ տարբեր դոնոր կազմակերպություններին էր ներկայացվել մարզի հնարավորությունները: Համաժողովն իր արդյունքը տվե՛ց, արդյոք կա՞ն ցանկություն հայտնողներ, ովքեր մտադրություն ունեն մարզում տարբեր ոլորտներում ներդրում անել:

-Մենք ուզում ենք բոլոր խնդիրները հստակ ամփոփել մեր փաստաթղթի մեջ: Ու արդեն երկրորդ փուլով մեր առաջարկների փաթեթը ներկայացնելու ենք պոտենցիալ ներդրողներին: Կկազմակերպվի հաջորդ հանդիպումը, որտեղ արդեն կքննարկվեն կոնկրետ գործողությունները: Առհասարակ, յուրաքանչյուր ներդրողի համար՝ ռուսաստանաբնակ սյունեցի լինի, թե օտարերկրացի բիզնեսմեն, Սյունիքի դռները բաց են:

-Պարո՛ն Հակոբյան, խոսակցություններ կան, որ Գորիսի պետհամալսարանի կառավարման խորհրդի հաջորդ նախագահը Դուք եք լինելու: Հավաստի՞ են այդ լուրերը, կա՞ն այլ թեկնածուներ:

-Հունվարի 16-ին նիստ է նշանակված, ամսի 16-ին պարզ կլինի:

-Այս տարի Գորիսում քաղաքապետի ընտրություն է լինելու: Լուրեր են շրջանառվում, որ Դուք արդեն ունենք քաղաքապետի Ձեր թեկնածուն: Որքանո՞վ են հավաստի այս տեղեկությունները:

-Համայնքապետի ընտրությունը, որքանով գիտեմ հունիս ամսին է: Մեր կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, բնականաբար իր դիրքորոշումը կհայտնի եւ դրա շրջանակներում կսատարենք մեր թեկնածուին:

-Եւ վերջում, եթե ասելիք ունեք կամ ավելացնելու որեւէ բան մեր հարցազրույցի շրջանակներում՝ խնդրեմ:

-Ես կարծում եմ, որ մենք ունենք ամենամեծ պոտենցիալը՝ դա մարդն է: Սյունեցին իր տեսակով, կամային հատկանիշներով, հայացքներով տարբերվել է: Կարծում եմ՝ մեր ժողովրդի հետ միասին կկարողանանք մեր խնդիրներին աստիճանական լուծում տալ: Եւ ամենակարեւորը՝ մարզային իշխանությունը պատրաստ է ծառայելու, լսելու ցանկացած սյունեցու մտահոգությունը՝ դա լինի առաջարկության կամ քննադատության տեսքով: Այդ միջավայրում մենք կփորձենք ավելի լավ աշխատել, նման բարյացակամ հասարակություն ունենալով, տեղական իշխանությունները կկարողանան խնդիրներն ավելի արդյունավետ եւ օպտիմալ լուծել: Բոլորիս հաջողություն եմ մաղթում, թող 2014թ.-ը լինի առաջին հերթին խաղաղության տարի, սիրո, ջերմության եւ աշխատանքի տարի: